ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԼՐԱՏՈՒ

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

No. 8 դեկտեմբեր 2013

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՐՈՒՄ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ԵԱՀԿ աջակցում է տնտեսական անվտանգության ջանքերին Հայաստանի հարավում՝ Սյունիքի մարզում, որը մեծապես կախված է հանքարդյունաբերությունից:

2013 թ. նոյեմբերի 11-13-ը Սյունիքի մարզպետարանի կողմից կազմակերպվեց ներդրումային ֆորում՝ ԵԱՀԿ-ի ծրագրերի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) աջակցությամբ՝ մասնավոր ներդրողներին և դոնոր կազմակերպություններին ոչ հանքարդյունահանման ներդրումային հնարավորությունները ներկայացնելու համար: Ակնկալվում է, որ նոր ներդրումները կդիվերսիֆիկացնեն մարզի տնտեսությունը՝ հիմնելով աշխատատեղեր և ստեղծելով եկամուտներ արդյունաբերության այլընտրանքային ոլորտներում:

Ֆորումին մասնակցեցին աննախադեպ թվով՝ 172 ներկայացուցիչներ կենտրոնական և տեղական իշխանություններից և մասնավոր հատվածից, ներառյալ փոխվարչապետ Արմեն Գևորգյանը և Հայաստանում դիվանագիտական առաքելությունների ղեկավարները: Քննարկումների կիզակետում գյուղատնտեսական արտադրանքն էր, սննդամթերքի վերամշակումը և զբոսաշրջության հնարավորությունները: Միացյալ Թագավորությունից ԵԱՀԿ փորձագետ Ֆելիքս Կումի-Ամպոֆոն մասնակիցներին ներկայացրեց տնտեսական զարգացման մոդելավորումը՝ որպես ներդրումների խթանման գործիք:

Պաշտոնական քննարկումներից զատ, միջոցառումը ընդգրկում էր նաև մի շարք այցելություններ տեղական արտադրամասեր, բնապահպանական ծրագրեր և զբոսաշրջային վայրեր՝ մասնակիցներին տարածաշրջանի հնարավորությունների մասին տեղում տեղեկություններ տրամադրելու համար:

Ֆեյսբուքի օգտատերերի հետազոտություն

Նոյեմբերի 20-ի համաժողովում ներկայացվեց և քննարկվեց «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի կողմից իրականացված ուսումնասիրությունը՝ Հայաստանի սոցիալական և քաղաքական կյանքում նոր մեդիաների և սոցիալական ցանցերի դերակատարության մասին: Միջոցառումը տեղի ունեցավ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացվող և ԵՄ կողմից ֆինանսավորվող Հայաստանում ընտրական գործընթացները միջազգային չափանիշներին համահունչ դարձնելու նպատակով կատարելագործման ծրագրի շրջանակում: Լրագրողները, բլոգերները, տեղական և միջազգային փորձագետները, խորհրդարանականները և քաղաքական գործիչները քննարկեցին սոցիալական մեդիաները, քաղաքացիական ակտիվությունը, քաղաքական գործընթացների թափանցիկությունը և ավանդական ու նոր մեդիաների համահարաբերակցությունը, ինչպես նաև տեղեկատվության անվտանգությունը:

Ինտելեկտուալ խաղ մարդու իրավունքների մասին

Երևանի, Գյումրիի և Վանաձորի ավագ դպրոցների 54 սաներ փորձարկեցին մարդու իրավունքների մասին իրենց գիտելիքները ինտերակտիվ խաղի ժամանակ, որը նոյեմբերի 17-ին անցկացվեց Շիրակի մարզում՝ Գյումրիում: Նախաձեռնությունը կազմակերպվել էր ԵԱՀԿ-ի կողմից՝ «Երևանի ինտելեկտուալ խաղերի ակումբ»-ի հետ համատեղ՝ հանդուրժողականության միջազգային օրը նշելու և դպրոցականների շրջանում մարդու իրավունքների մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Խաղից առաջ դպրոցականները այցելեցին Ազգային ժողով, Վճռաբեկ դատարան և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Միջազգային համաժողով ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ

Նախկին խորհրդային երկրներից շատերի համար ոստիկանության գործունեության բարեփոխումը դարձել է կարևոր գերակայություն ժողովրդավարացման գործընթացում: Լայնորեն ընդունված է, որ իրավապահ մարմինները պետք է ձգտեն մատուցել ավելի թափանցիկ և հաշվետու ծառայություն՝ հարգելով բոլոր քաղաքացիների իրավունքները: Այսինքն, դա ընդունվում է որպես մարտահրավերներ պարունակող և պատասխանատու գործընթաց, որը պահանջում է համակարգային փոփոխություններ, ավելի մեծ արհեստավարժություն ոստիկանների կողմից և, ամենակարևորը, մտածելակերպի փոփոխություն՝ ուղղված հանրության կարիքներին արձագանքող արդյունավետ ծառայության մատուցմանը:

Հայաստանում ոստիկանության բարեփոխումների պաշտոնական մեկնարկը տրվել է 2010 թ. ապրիլի 1-ին: Այդ ժամանակից ի վեր ԵԱՀԿ-ն աջակցում է գործընթացին՝ կենտրոնանալով Հայաստանում ժողովրդավար ոստիկանության ապահովման, մասնավորապես, ոստիկանների կրթական և ոստիկանություն-հանրություն ավելի ամուր գործընկերության ոլորտների վրա:

2013 թ. նոյեմբերի 26-27-ը կազմակերպված միջազգային համաժողովը հանդիսանում էր ԵԱՀԿ-ի և ՀՀ ոստիկանության համատեղ նախաձեռնություններից մեկը, որի նպատակը Հայաստանի ոստիկանության բարեփոխումների ներկայացումն էր լայն հանրությանը, ներառյալ քաղաքացիական հանրությանը, լրատվամիջոցներին և միջազգային հանրությանը: Համաժողովը ծառայեց որպես հարթակ՝ համանման նախադրյալներ ունեցող այլ երկրների փորձը բացահայտելու և դրանց ձեռքբերումները և մարտահրավերները քննարկելու, ինչպես նաև ոստիկանության հետագա բարելավման մասին մտքեր փոխանակելու համար:

Համաժողովը մեկտեղեց ՀՀ ոստիկանության և համապատասխան պետական, քաղաքացիական, միջազգային և տարածաշրջանային գործընկերների ներկայացուցիչների՝ քննարկելու ոստիկանության բարեփոխումներին առնչվող բազմաթիվ հարցեր, ինչպիսիք են՝ հաշվետվողականությունը և թափանցիկությունը, կրթական բարեփոխումը և հանրության վստահությունը ոստիկանության հանդեպ: Վրաստանի, Էստոնիայի և Ղրղզստանի ներկայացուցիչները կիսվեցին ոստիկանական բարեփոխումների իրենց փորձով:

Ընտրությունների ամփոփում

2012թ.-ի և 2013թ.-ի համապետական երկու ընտրական փուլերից հետո՝ 2013 թ. հոկտեմբերի 7-8-ը ԵԱՀԿ գրասենյակը կազմակերպեց **Ընտրական գործընթացներում ներգրավված կողմերի դերակատարման գնահատում** համաժողովը: Միջոցառման նպատակը երկու ընտրական փուլերից քաղած դասերի քննարկումն էր և հետընտրական գործընթացների վերլուծության և ներգրավված տարբեր կողմերի դերակատարման ինքնագնահատման համար հարթակի տրամադրումը: Համաժողովին մասնակցեցին բազմաթիվ պետական կառույցներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և քննարկեցին ինչպես բարելավել կանոնակարգերը հետագայում և կարգավորել բացթողումները գործնականում:

Տեղեկատվական վեճերի արտադատարանական լուծումներ

2013 թ. հուլիսի 5-6-ը ԵԱՀԿ գրասենյակը կազմակերպել էր սեմինար՝ լրագրողների, մեդիայի հարցերով փաստաբանների և դատական փորձագետների համար՝ վեճերը լուծելիս Տեղեկատվական վեճերի խորհրդի (ՏՎԽ) դերը քննարկելու համար: Մասնակիցները խոսեցին ապաքրեականացված զրպարտության օրենքի բարելավված կիրարկման, լրատվամիջոցներում անմեղության կանխավարկածի ենթադրվող խախտումների և հեղինակային իրավունքի մասին օրենքի նախագծի մասին: 2011 թ.-ից ի վեր ՏՎԽ կատարել է 35 փորձագիտական վերլուծություն՝ զրպարտանքի գործերով, որոնցում ներգրավված էին լրատվամիջոցները և հանդես եկել որպես միջնորդ՝ արտադատարանական կարգավորումների համար:

Դատախազության համակարգի բարեփոխումներ

ԵԱՀԿ-ի և ՀՀ դատախազության միջև համագործակցության հուշագրի շրջանակում կազմակերպվեց միջազգային փորձագետի այց՝ դատախազության համակարգում իրականացվող բարեփոխումները վերլուծելու համար: Փորձագետը ներկայացրեց իր տեսակետը հաշվետվության մեջ ընդգրկված կոնկրետ առաջարկությունների վերաբերյալ, և կողմերը համաձայնեցին առաջիկայում համագործակցել դրանց իրականացման հարցում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Դասընթաց քրեակատարողական ծառայողների համար

2013 թ. հոկտեմբերի 17-20-ը ԵԱՀԿ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի և Միջազգային բանտային բարեփոխումների հետ համագործակցությամբ, կազմակերպեց մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների և ներպետական օրենսդրության հարցերով դասընթաց քրեակատարողական ծառայողների և քրեակատարողական հիմնարկները մշտադիտարկող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար: Հայաստանի 12 քրեակատարողական հիմնարկների ներկայացուցիչներ կիսեցին կալանավորված կամ դատապարտված անձանց իրավունքների խթանման և պաշտպանության իրենց փորձը: Մշտադիտարկման խմբի նոր անդամների և ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության ներքո գործող Ազգային կանխարգելիչ մեխանիզմի անդամների համար անցկացվող դասընթացի նպատակը ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի և պահման պայմանների մշտադիտարկման բարելավումն էր: Մասնակիցները քննարկեցին նաև ցմահ դատապարտյալների և ազատազրկված կանանց ու անչափահասների խնդիրները՝ անդրադառնալով նրանց հատուկ կարիքներին, իրավունքներին և կարողություններին:

Մարդու իրավունքների ուսուցանում զինված ուժերում

ԵԱՀԿ-ն իրականացրեց մարդու իրավունքների դասընթաց՝ զինված ուժերի անձնակազմից ընտրված խմբերի վերապատրաստողների համար: Այս ծրագիրը մշակվել և կազմվել է ՀՀ պաշտպանության նախարարության հետ սերտ համագործակցությամբ և իրականացվել «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի հետ համատեղ: Դասընթացների ժամանակ որպես ուսումնական նյութ օգտագործվեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնի Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին ձեռնարկի հայերեն թարգմանությունը և ԵԱՀԿ գրասենյակի կողմից մշակված ուսուցողական ձեռնարկը:

Քրեակատարողական համակարգի և դատական վարույթների լուսաբանում

2013 թ. սեպտեմբերի 28-29-ը Հայաստանի Հելսինկյան կոմիտեն՝ ԵԱՀԿ աջակցությամբ, կազմակերպեց աշխատաժողով լրագրողների համար՝ քրեակատարողական համակարգի լուսաբանման սկզբունքների թեմայով: 20 լրագրողներ և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հանրային կապերի աշխատակիցներ քննարկեցին հաշվետու լուսաբանման խնդիրները՝ հատուկ ուշադրություն դարձնելով կալանավորված անձանց և բանտարկյալների իրավունքներին և լրագրողական էթիկային: Նոյեմբերի 16-ին 25 լրագրողներ մասնակցեցին ԵԱՀԿ-ի և ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպված երկօրյա վերապատրաստման դասընթացին: Այն վարում էին դատավորներ, անկախ փարձագետներ և մեդիա մասնագետներ, վերլուծվեցին քաղաքացիական ու քրեական գործերով դատական վարույթների լուսաբանումը լրատվամիջոցներում, ինչպես նաև դատական իշխանության հաշվետվողականությունը և անկախությունը, կարգապահական վարույթները և դատավորի վարքագծի կանոնները:

Փաստաբանների կարողությունների հզորացում

2013 թ. նոյեմբերի 20-22-ը ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները՝ ԵԱՀԿ-ի աջակցությամբ, ուսայցով մեկնեցին Փարիզի փաստաբանների ասոցիացիա: Այցի ընթացքում երկու հաստատությունների միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր և քննարկվեց ֆինանսական հարցերը կարգավորելու նպատակով Հայաստանում ֆրանսիական ԿԱՌՊԱ մոդելի ներդրման հնարավորությունը: Փաստաբանների պալատի նախագահի գլխավորած խումբը խորացրեց գործնական կապերը՝ հանդիպելով Փարիզի փաստաբանների ասոցիացիայի նախագահին և մի շարք առանձին հանդիպումներ ունենալով ֆրանսիացի գործընկերների հետ: Այցը ծառայեց նաև Փաստաբանների պալատի դիրքը միջազգային գործընթացներում ամրապնդելու համար:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Երիտասարդների կրթում

2013 թ. հոկտեմբերի 5-6-ը Եվրասիա համագործակցության հիմնադրամը՝ ԵԱՀԿ-ի աջակցությամբ, 20 երիտասարդ ժուռնալիստների և բլոգերների համար կազմակերպեց մարդու իրավունքների, սոցիալական ներառման և շահերի պաշտպանության գործիքների մասին դասընթաց: Մեդիայի և մարդու իրավունքների հարցերով փորձագետները վարեցին սոցիալական խնդիրների վերհանման, սոցիալական ցանցերի և լուսանկարչության միջոցով տարբեր խմբերի մտահոգությունների ուսումնասիրման և մեծ լսարանի իրազեկման վերաբերյալ քննարկումներ՝ հանրության ուշադրությունը գրավելու և դրական փոփոխություններ կատարելու համար :

Նոյեմբերի 14-15-ը տեղի ունեցավ ուսանողական բանավեճի ակումբի հանրապետական մրցաշարի եզրափակիչ միջոցառումը: Հայաստանի 7 համալսարանների ուսանողներ մասնակցեցին ԵԱՀԿ-ի աջակցությամբ անցկացվող միջոցառմանը: Քննարկումը կազմակերպվեց երիտասարդների քաղաքացիական ակտիվության խթանման ծրագրի շրջանակում, որն իրականացվում է «Ձինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի հետ համատեղ:

Նոյեմբերի 18-21-ը մի խումբ երիտասարդներ Նորվեգիայի կողմից ֆինանսավորվող ԵԱՀԿ մոդել ծրագրի շրջանակում ուսայցով մեկնեցին ԵԱՀԿ քարտուղարություն:

ՄԻԵԴ-ի որոշումների կատարման մոնիթորինգ

2013 թ. դեկտեմբերի 19-ին ներկայացվեցին հայ փաստաբանների և անկախ փորձագետների կողմից պատրաստված Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 48 որոշումների կատարման մոնիթորինգի արդյունքները: Մասնակիցները քննարկեցին նաև երրորդ կողմի կարծիքի դերը ազգային և միջազգային ատյաններում:

Ֆոտո ցուցահանդես՝ Մարդու իրավունքների օրը

ԵԱՀԿ-ի կողմից աջակցվող **«Բարձրացրու քո ձայնը՝ հանուն քո իրավունքի»** խորագրով քարոզարշավը ավարտվեց 2013 թ. դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը նշելով: Քարոզարշավի շրջանակում կազմակերպվեց ֆոտոմրցույթ և ցուցահանդես, մարդու իրավունքների թեմայով բանավեճ և թատերական ներկայացում: Քարոզարշավը, որը նպատակաուղղված էր մասնավորապես երիտասարդներին, կազմակերպեցին ԵԱՀԿ, ՄԱԿ, ԵՄ պատվիրակությունը, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

Առցանց լրագրողների ուղեցույց

«Լավագույնը ցանցում» ուղեցույցի շնորհանդեսը կայացավ «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի կողմից՝ ԵԱՀԿ աջակցությամբ: Ուղեցույցը ներկայացնում է տեսական և գործնական գիտելիքներ՝ բարձրորակ առցանց լուսաբանման և առաջարկում ուղենիշներ՝ տեղեկատվությունն անվտանգ դարձնելու համար:

Ոստիկանության անձնակազմի բարեվարքության ձեռնարկ

ԵԱՀԿ թարգմանեց և հրապարակեց Ձինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնևյան կենտրոնի կողմից պատրաստված **Ոստիկանության անձնակազմի բարեվարքության** ձեռնարկը, որում ներկայացված են ոստիկանությունում կոռուպցիայի ազդեցությունը, ինչպես նաև ոստիկանական ծառայության արժեքները և էթիկան:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն իր 57 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին՝ օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև ստանձնած իր պարտավորությունների կատարմանը անվտանգության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքներ:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ.. (00 374 10) 229610/11/12
էլ.փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ http://www.osce.org/yerevan